ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. մարտի 9-ից 13-ը ք. Լյուբլյանա

(Սլովենիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

- Մարիամ Մանուկյան - ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետի տեղակալ

- Կարեն Հովհաննիսյան - ՀՀ ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության ընթացիկ հարկային վարչարարության կազմակերպման բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սլովենիայի Հանրապետություն, ք. Լյուբլյանա, մարտի 9-ից 13-ը

3. Հրավիրող կողմը՝

Հարավ-Արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոն (Center of Excellence in Finance in the South East Europe/CEF):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Դասընթացը նախատեսված էր մասնակիցներին ներկայացնել ստվերային տնտեսության խնդիրները, ռիսկերը և դրանց ուղղությամբ առաջարկել լուծման տարբեր մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան կառավարություններին կրճատել ստվերային տնտեսության ռիսկերը և մեծացնել պետական եկամուտները: Դասընթացին մասնակցությունը հնարավորություն է տվել ուսումնասիրելու ներկա ժամանակաշրջանում ստվերային տնտեսությանը վերաբերող հիմնական հարցերը, այդ թվում՝ դրա կապը աշխատանքի շուկայի հետ, ոչ ֆորմալ զբաղվածության հիմնահարցերը, դրանց հետևանքները պետական եկամուտների վրա: Դասընթացը հնարավորություն տվեց ուսումնասիրել նաև տարբեր երկրներում ստվերային

տնտեսության հարկման մի շարք հարցեր՝ քննարկելով նաև միջազգային պրակտիկայում հաջողված և ձախողված որոշ օրինակներ:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները՝

- ստվերային տնտեսության առաջացման պատճառները և հետևանքները, դրա դեմ պայքարի տարբերակները,
- ոչ ֆորմալ զբաղվածության, առցանց աշխատողների հարկման հարցերը,
- ստվերային տնտեսության կապը նոր (օրինակ՝ տեխնոլոգիական) միտումների հետ, ինչպես նաև դրա բնույթը թե՛ զարգացած, թե՛ զարգացող տնտեսություններում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում Հարավ-Արևելյան Եվրոպայում ֆինանսական առաջավոր փորձի կենտրոնի և Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչները ներկայացրել են ստվերային տնտեսության հիմնական հարցերը (առաջացման պատճառները, հետևանքները), ոչ ֆորմալ զբաղվածության խնդիրները, դրա հետ կապված միջազգային փորձից օրինակներ: Քննարկվել են նաև ներկա փուլում ժամանակակից տնտեսություններում հիմնական մարտահրավերները և համապատասխան ռիսկերի կրճատմանն ուղղված առաջարկություններ:

Դասընթացը անցկացվել է ինտերակտիվ, և մասնակից երկրների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ներկայացնել իրենց տեսակետները և փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացը չէր ենթադրում որոշումների ընդունում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացին մասնակցությունը հնարավորություն տվեց ծանոթանալ ստվերային տնետեսության հիմնական հարցերին, ընթացիկ միտումներին, առաջացող խնդիրներին և վերջիններիս ուղղությամբ առաջարկվող լուծումներին:

Միջոցառմանը մասնակցությունը նաև փորձի փոխանակման և ոլորտի օտարերկրյա գործընկերների, փորձագետների հետ կապեր հաստատելու հնարավորությունն ընձեռեց:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիամ Մանուկյան

Կարեն Հովհաննիսյան

18.03.2026թ.